12454

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 07 » 10 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ 0191-21**

***Ձեռնարկողը՝*** ***«Մկրտիչ Ումրոյան» ՍՊ ընկերություն***
*Շիրակի մարզ, Մատրոսովի փ./S/ 12 Գյումրի 3101*

***Գործունեությունը՝*** ***Շիրակի մարզի Արեգնադեմի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
*Շիրակի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0191- 21
<07> 10 2021թ.

# *Շիրակի մարզի Արեգնադեմի բազալտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն*

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «Մկրտիչ Ումրոյան» ՍՊԸ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր |
| Գործունեությունը՝ | «Ա» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | Շիակի մարզ, Արեգնադեմ բնակավայր |

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

***Ներածական մաս***. Արեգնադեմի բազալտների հանքավայրը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի վարչական շրջանում, Արեգնադեմից 2.2կմ հեռավորությամբ, Ջրաձոր գյուղից 0.8կմ հյուսիս-արևմուտք՝ Ախուրյան գետի կանիոնի աջ լանջին:

Հանքավայրը հողածածկ և ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է Արեգնադեմ, Ջրաձոր Հողմիկ (4.9կմ), Գոգհովիտ (5.2կմ) գյուղերի, Ամասիա (7.9կմ) ու Գյումրի քաղաքների (24,4կմ) և Հայկական երկաթուղու Գյումրի կայարանի հետ:

Արեգնադեմի հանքավայրը տեղակայված է Շիրակի գոգավորության հյուսիս-արևմտյան հատվածում, 1730.0-1772.7 մ բացարձակ բարձրությունների վրա:

Հանքավայրի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

40° 55' 08'' - հյուսիսային լայնության
43° 46' 00'' - արևելյան երկայնության

Արեգնադեմի բազալտների հանքավայրում (հետախուզման սահմաններում) 01.08.2014թ.-ի դրությամբ հաշվարկված են բազալտների 2549.7 հազ.մ$^3$ A կարգի հաշվեկշռային պաշարներ: Բազալտների կորզվող պաշարները կազմում են 2359750մ$^3$: Ներկայացվող նախագծում բազալտների տարեկան արդյունահանումը կազմում է 2549.7 հազ.մ$^3$, իսկ օտարման մակերեսը՝ 11,64հա մակերես, որում բազալտների տարեկան արդյունահանվող քանակները ընդհանուր երկու բացահանքերի համար կազմում է 120000մ$^3$:

***Նկարագրական մաս.*** Արեգնադեմի բազալտների հանքավայրը շահագործվելու է երկու բացահանքերով, ինչը պայմանավորված է հանքավայրի կենտրոնական մասով անցնող բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի համար թողնվող բնամասով: Բացահանքերը

շահագործվելու են միաժամանակ: Ելնելով հանքավայի տեղադրման լեռնաերկրաբանական պայմաններից նախագծում ընդունված են բացահանքերի հետևյալ պարամետրերը.
Բացահանքերի առավելագույն լայնությունը մակերևույթի վրա՝

1-ին բացահանք - 220մ, 2-րդ բացահանք - 250մ

- Հանքադաշտի մակերեսը մակերևույթի վրա՝

1-ին բացահանք – 4,32հա, 2-րդ բացահանք – 6,13հա

- Բազալտների մշակվող միջին հզորությունը – 24,5մ:
- Բացահանքի առավելագույն խորությունը (ամենաբարձր և ամենացածր նիշերի միջև եղած տարբերությունը)՝

1-ին բացահանք – 36մ, 2-րդ բացահանք – 39մ

- հանքաստիճանի բարձրությունը վերջնական դիրքում -5մ,
- հանքաստիճանի թեքման անկյունը – 550;
- անվտանգության բերմայի նվազագույն լայնությունը – 2,0մ;

Հայցվող տեղամասի 1-ին և 2-րդ բացահանքերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են՝

1-ին բացահանքի

1. X=8395792 Y=4532306
2. X=8395678 Y=4532366
3. X=8395640 Y=4532482
4. X=8395816 Y=4532535
5. X=8395998 Y=4532516
6. X=8395894 Y=4532427
7. X=8395833 Y=4532375

2-րդ բացահանքի

1. X=8395823 Y=4532290
2. X=8395867 Y=4532347
3. X=8396043 Y=4532510
4 X=8396240 Y=4532479
5 X=8396281 Y=4532345
6 X=8396232 Y=4532321
7 X=8396158 Y=4532299
8 X=8396115 Y=4532309
9 X=8396068 Y=4532348
10 X=8395931 Y=4532304
11 X=8395898 Y=4532281
12 X=8395881 Y=4532257

Օգտակար հանածոյի որակական գնահատականը տրվել է ըստ ГОСТ 9479-98 “Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий”, Рко ГОСТ 8267-95 ՀՍՏ ГОСТ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» և ՀՍՏ ГОСТ 8736-95 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջների: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենի բազալտները և ժամանակակից դելյուվիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները: Բազալտները մերձմակերեսային մասում ուժեղ ճեղքավորված և հողմահարված են, իսկ խորքում ներկայացված են ճեղքավորված, ծակոտկեն և խոշորածակոտկեն ապարներով:

Համաձայն ընդունված տեխնոլոգիաի նախատեսված է բացահանքերի միակողմանի ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգ՝ մակաբացման ապարներն արտաքին ժամանակավոր լցակույտեր տեղափոխելով:

Հանույթաբարձման աշխատանքների համար ընդունված է տեղում առկա 1,8մ³ շերեփի տարողությամբ, հակառակ բահով սարքավորված էքսկավատորը:

Բացահանքի պայմաններում Т-170 բուլդոզերի աշխատանքները ներառում են հանքակուտակի առաստաղը մակաբացման ապարներից մաքրումը, տեղափոխումը մոտ 15,0-20,0մ և կուտակումը, հանքաստիճանների մշակման ժամանակ ապարների տեղափոխումը և կուտակումը լցակույտում: Արդյունահանման աշխատանքները իականացվելու են պայթեցման եղանակով: Պայթանցքերի պայթեցման համար ընդունված է փամփուշտավորված ամոնիտ N6-ЖВ, կամ նրան համարժեք տեղում արտադրվող այլ պայթուցիկ նյութեր, որպես պայթեցման միջոց՝ էլեկտրաճայթիչներ: Պայթեցման աշխատանքները պետք է կատարվեն լիցենզավորված հատուկ կազմակերպությունների կողմից:

Արեգնադեմի հանքավայրի տարածքի կենտրոնական մասով ներկայումս անցնում են բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր: Վերջինիս անվտանգության պահպանման գոտիներում պարփակված օգտակար հանածոյի ներկայումս անձեռնմխելի պաշարներն առանձնացվել են որպես արտահաշվեկշռային: Էլեկտրալարերի անվտանգության գոտուն հարակից մասերում բազալտների նախնական փխրեցումը հանույթաբարձման աշխատանքներից առաջ նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով հիդրավլիկ մուրճով:

Մակաբացման ապարների տեղափոխումը մինչև 0.5կմ միջին հաշվարկային հեռավորության վրա գտնվող լցակույտ, իսկ օգտակար հանածոյի տեղափոխումը մինչև 0.9կմ միջին հեռավորության վրա մշակման արտադրամաս կատարվում է ավտոինքնաթափերի միջոցով:

Բացահանքի մակաբացման ապարները ներկայացված են փխրուն-բեկորային դելյուվիալ առաջացումներով և հողմնահարված, ճեղքավորված բազալտներով (փուշտա): Մակաբացման ապարների ընդհանուր ծավալը կազմում է 181390մ³, իսկ հզորությունը՝ 1.57մ, այդ թվում՝ 0.49մ փխրուն-բեկորային առաջացումներ (56600մ³ ծավալով) և 1.08մ հողմահարված, ճեղքավորված բազալտներ (124790մ³ ծավալով): Մակաբացման միջին գործակիցը կազմում է 0.066մ³/մ³,

Մակաբացման ապարների հեռացումը կատարվում է բուլդոզեր-էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով: Մակաբացման ապարները կուտակվում են արտաքին ժամանակավոր լցակույտերում առանձին-առանձին:

Փուշտան նախատեսվում է տեղափոխել 2-րդ բացահանքի հարավային եզրագծով ձևավորվող թիվ 1-ին արտաքին լցակույտ: Փուխր մակաբացման ապարների մի մասը նախատեսվում է տեղափոխել թիվ 1-ին բացահանքի հարավ հարավ-արևմտյան եզրագծով ձևավորվող ժամանակավոր արտաքին թիվ 2-րդ լցակույտ, իսկ մյուս մասը տեղադրել ցակույտ թիվ 3-րդ լցակույտում: Փուխր մակաբացման ապարների ժամանակավոր արտաքին թիվ 2-րդ լցակույտը զբաղեցնում է 9200մ² մակերես առավելագույնը 4մ բարձրությամբ: թիվ 3-րդ լցակույտը զբաղեցնում է 9500մ² մակերես առավելագույնը 2,5մ բարձրությամբ: Փուշտայի թիվ 1-ին արտաքին լցակույտը զբաղեցնում է 15000մ2 մակերես, վերին հարթակի (1730մ նիշ) մակերեսը կազմում է 10100մ²: Առավելագույն բարձրությունը 15մ:

Հանքարդյունահանման աշխատանքների նախապատրաստման ընթացքում խախտվում է որոշ մակերեսով հողածածկույթ: Հողի բերրի շերտը մինչև օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ կատարելը հանվում և պահեստավորվում է՝ խախտված հողերի ռեկուլտիվացման նպատակով օգտագործելու նպատակով:

Հողածածկույթի աղբոտումը կանխելու նպատակով նախատեսվում է տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործում սարքին վիճակով՝ բացառելու համար վառելիքի և

յուղի պատահական արտահոսքը՝ վառելիքաքսուկային նյութերով աղտոտումը կանխելու նպատակով, օգտագործված յուղերի հավաքում մետաղական տակառներում և պահպանում հատուկ առանձնացված վայրերում (օրինակ՝ վառելիքաքսուքային նյութերի պահեստում) հետագա ուտիլիզացման նպատակով: Ինչպես նաև աղբոտումը կանխելու նպատակով արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում աղբանների տեղադրում, տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումների կատարում միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում, առաջացած մետաղի թափոնների (անօգտագործելի պահեստամասեր և անվադողեր) հավաքում և իրացում համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից:

Հանքավայրի եզրագծից դեպի բնակելի տարած /Արեգնադեմ բնակավայր/ հեռավորությունը կազմում է 2.2 կմ, ինչի պարագայում սանիտարական նորմերին համապատասխան ապահովված է 500.0մ սանիտարապաշտպանիչ գոտին:

Արեգնադեմի բազալտների հանքավայրից հայցվող տեղամասում ընկերության կողմից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքերի իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը կրող հիմնական աղբյուրներն են՝ օդային ավազանը, հողային ռեսուրսները, մակերևույթային ջրեր, կենսաբազմազանություն:

Բացիանքի շահագործման աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր.

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրեկան 2 անգամ),
- բացահանքի արդյունահանված, խախտված տարածքների հարթեցում խախտված հողերի վերականգնում:
- բացահանքի տարածքում կկատարվի ռեկրեացիոն լանդշաֆտի ստեղծում կամ օգտակար հանածոյի արդյունահանումից հետո առաջացած փոսի արհեստական ջրավազանի՝ ձկնաբուծարանի հինման միջոցառումներ,
- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում թփուտներով,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար,
- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար տարեկան կծախսվի 150000 դրամ գումար:

Հանքարդյունահանման աշխատանքների ջուրն օգտագործվում են փոշենստեցման, լեռնային զանգվածների խոնավացման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով: Խմելու ջրի կմատակարարվի ցիստեռնով, մոտակա Արեգնադեմ



ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

գյուղից պայմանագրային հիմունքներով (ջրի ծախսը կկազմի 85,8մ$^3$) տարի, միջին օրեկան 0.33մ$^3$, իսկ կենցաղային կեղտաջրերը՝ 0.28մ$^3$ օրեկան կլցվեն են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար կտեղափոխվեն սահմանված կարգով: Բացահանքում մթնոլորտային տեղումները կհեռանան բացահանքի հատակի բազալտների ճաքերի և ծակոտիների մեջ ներծծման և ինքնահոս կերպով:

Կենդանական աշխարհի պահպանությանն նպատակով բացառվում է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս:

Աղմուկի մակադակը թույլատրելի սահմաններում պահելու նպատակով տրանսպորտային միջոցները և մեխանիզմները կաշխատեն միայն սարքին խլացուցիչներով:
Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում նախատեսված են հետևյալ միջոցառումները՝ ջրցանի ծավալների ավելացում, միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակի կրճատում, մակաբացման աշխատանքների դադարեցում և այլն:
Շահագործման ավարտից հետո լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի են ենթարկվում թիվ 1-ին և թիվ 2-րդ բացահանքերի հատակների մակերևույթները (1730մ նիշ ունեցող հորիզոնում) համապատասխանաբար՝ 1,7հա և 4,2հա մակերեսներով, փուշտայի 1-ին արտաքին լցակույտի մակերևույթը՝ 1,01հա մակերեսով, ինչպես նաև արտադրական հրապարակը՝ 0,4հա մակերեսով: Ընդհանուր ռեկուլտիվացվող մակերեսը կազմում է 7,31հա, իսկ իրականացման համար անհրաժեշտ ծախսերը կկազմեն 16083,9 հազ. դր.: Ապարների փռումը և հարթեցումը լցակույտերում կատարվում է բուլդոզերի միջոցով:
Հակահրդեհային անվտանգություն համար նախատեսված է միջոցառումներ, որոնք ներառում են՝ էլեկտրական ենթակայանի համալրումը հակահրդեհային սարքավորումներով և ձեռքի կրակմարիչների նախատեսումը:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մի շարք մշտադիտարկումների միջոցառումները (մթնոլորտային օդի, հողային ծածկույթի, կենսաբազմազանության), որոնց համար նախատեսված է ժամանակացույց (այդ թվում՝ լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ, վայրի բնության, կենսամիջավայրի մշտադիտարկումներ) և իրականացվելու են օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մգ/մ$^3$, ազոտի երկօքսիդի համար՝ 0.2մգ/մ$^3$, մրի համար՝ 0.15մգ/մ$^3$՝:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150 հազ.դրամ:

***Պատճառաբանական մաս.*** Նախատեղվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Շիրակի մարզի Ամահայի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության կողմից նախատեսվող գործունեության իրականացումը արժանացել է հավանություն:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներիառաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է:

Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրվել է արտադրական վտանգվոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության թիվ 1220 եզրակացությունը, որը առկա է ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, կրթության, գիտության, սպորտի, մշակույթի, սպորտի և արտակարգ իրավիճակների նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Շիրակի մարզպետարանը:

Պետք է փաստել, որ ՇՄԱԳ հաշվետվությունում շրակա միջավայրի պահապանության, ինչպես նաև սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել բավարար միջոցառումների ծրագիր:

Հանքավայրի շահագործման արդյունքում հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա հիմնականում պայմանվորված կլինեն արդյունահանման աշխատանքներով՝ օդայի, ջրային ավազանների, հողային ռեսուրսների աղտոտվածությունը, այդ թվում նաև ազդեցություններ կլինեն կենսաբազմազանության վրա, որոնք սակայն կլինեն թույլատրելի նորմանների սահմաններում:

## Փորձաքննական պահանջներ

1. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
2. Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկումներ ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հաշվետվությունում, նախագծային փաստաթղթերում ներկայացված տեխնոլոգիական նորմերը, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև ապահովել նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:
4. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի Ընդերքօգտագործման հատևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների մթնոլորտային օդ, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
5. Պայթեցման աշխատանքներն անհրաժեշտ է կատարել ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 6-ի «Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության միասնական կանոնները հաստատելու մասին» N291-ն որոշման պահանջով՝ համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կողմից:
6. Արդյունահանման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 20 հունվարի 2005 թվականի N 64-Ն «Ջրաէկոհամակարգերի



02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին որոշման պահանջներով»:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Շիրակի մարզի Արեգնադեմի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ն.Նասիբյան

Ընդամենը՝ 7 էջ